ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՊՍԱԿ» ԵՎ «ԱՐԱՔՍ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

XIX դ. հայ տնտեսագիտական մտքի գլխավոր ուղղությունները մի ուրույն համապատասխանություն ունեին հասարակական հոսանքների սոցիալ-պատմական բովանդակության հետ։ Այս տեսակետից միանգամայն որոշակի են տարբերակվում տնտեսական զարգացման վերաբերյալ այն ուղեգծումները, որ առաջադրում էին հասարակական հոսանքներ ներկայացնող «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Նոր-դար», «Մուրճ» և «Արձագանք» պարբերականները։ Սակայն կային նաև բազմաթիվ այլ պարբերականներ, որոնք թեև չունեին ամբողջական ու վերջավորված ուղղություն ու թերևս աչքի չէին ընկնում սոցիալ-տնտեսական կյանքի խոր ու համակողմանի վերլուծությամբ, այնուամենայնիվ, զբաղվում էին ժամանակի առաջադրած խնդիրների արծարծումներով, որոնք և լրացնում ու երանգավորում են հայ տնտեսագիտական մտքի պատմությունը։ Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից առանձնացնենք երկու պարբերական՝ «գավառական-դեմոկրատական» ուղղության[1] հարող Վ. Պապաջանյանցի «Պսակ» շաբաթաթերթը և Ս. Գուլամիրյանի «Արաքս» հանդեսը։ Նախ նկատենք, որ չի կարելի ստույգ համարել «Հայկական սովետական հանրագիտարանում» տրված այն անվերապահ բնորոշումը, թե «Արաքսն» «ունեցել է լիբերալ-բուրժուական ուղղություն»[2]։ Դրանում համոզվելու համար բավական է թեկուզ վկայակոչել հանդեսի կարծիքը Գրիգոր Արծրունու մասին, վերջինիս նվիրված մահախոսականում. «ինչքան էլ նրա գաղափարները հայ կյանքին հարմարվելով՝ լուրջ քննադատության չդիմանան, ինչքան էլ նրա դատողությունները մի քանի հասարակական խնդիրներում բոլորովին սխալ տրամադրության վրա հիմնված լինեն, այնուամենայնիվ, նորա քարոզները միշտ գրավել են երիտասարդությանը ոչ այնքան նոցա սխալ եզրակացություններով, որքան նոցա հիմքը կազմող գեղեցիկ ճշմարտություններով»[3]։

«Արաքսը» չէր հավակնում ուղղություն տալու գաղափարական ամբողջական սիստեմ ենթադրող հասարակական ուրույն հոսանքի։ Նրանում կարելի է հանդիպել և՛ լիբերալ-բուրժուական, և՛ ազգային-պահպանողական, և՛ ազգային-դեմոկրատական մտայնություններին հարող հայացքներ, որոնց սահմաններում էլ այն անդրադարձել է Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարի հարցերին։

XIX դ. վերջին քառորդում երկրամասում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հանգեցրեց մանրգյուղացիական տնտեսության քայքայմանն ու գյուղի դասակարգային շերտավորմանը։ Ծանրացավ ամենաբազմամարդ դասակարգի՝ գյուղացիության, տնտեսական ու սոցիալական վիճակը։ Ահա այս պարագաներում է, որ ռուսական նարոդնիկների հետևողությամբ, հայ գյուղի բարնկարդման առաջելությամբ ասպարեզ է գալիս այսպես կոչված «ժողովրդասիրական շարժումը»։ Ըստ էության մանրբուր-

---

1 «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Երևան, 1964, էջ 35։

2 «ՀՍՀ», հ. 1, Երևան, 1974, էջ 703։

3 «Արաքս», 1892, գիրք «Բ», էջ 11։

ժուական այս գաղափարախոսությունը հակակապիտալիստական բովանդակություն ուներ և միտում էր համայնքի վրա պատվաստել մի ուրույն գյուղացիական սոցիալիզմ։ Հատկապես պատմական մեծ առաքելություն էր վերագրվում մտավորականությանը, որը պետք է ծառայեր գյուղի «հասարակական բարօրությանը»։ Հենց այս պատմական դերն էր պատվիրում «Պնակի» խմբագիր Վ. Պապաջանյանը՝ Մոսկվայի մի խումբ հայ ուսանողների ուղղած պատասխան նամակում։ «Բայց մասնավոր անձինք,— գրում էր նա,— «ես, «դու», «նա» կարող ենք գործել, առնել, երբ բարձրանալով ընդհանուրի միջից, կծառայենք մեր մասնավոր գործունեությամբ ընդհանուրի բարօրության, բարգավաճության ու լուսավորության մեծ գործին և կգործենք նպատակահարմար, երբ կձուլվենք հասարակ ժողովրդի հետ, երբ մեր անձնավորության ու հասարակ ժողովրդի մեջ կլինի մեկ անխզելի կապ ու կենդանի կապակցություն»[4]։ Հազիվ թե Ս. Պապաջանյանցը միտում ունենար նրանց դարձնելու «համայնական սոցիալիզմի» իսկական գաղափարախոսներ, սակայն ակներև է հայ իրականության սոցիալ-տնտեսական կառուցվածքի բաղադրամասերում ագրարային հարաբերությունների դեմոկրատական վերանորոգությունների նրա առաջնային ծրագիրը։ «Գյուղացին մեր ազգի արյունն ու մարմինն է», ուստի և անհրաժեշտ է նրան փրկել քայքայումից։ «Հասարակ ժողովուրդը,— շարունակում է Ս. Պապաջանյանցը,— մեկ ազգի, իսկ ընդհանուր հասարակ ժողովուրդը մարդկության հասարակական շինվածքի հիմքն է։ Նա ծնողն է բոլոր մեկ ազգին պատկանող դասակարգերի, սա այն առատ ու պարարտ հողն է, որ ուր որ ինչ ցանես, այն և անշուշտ կհնձես։ Սոցանից է կախ. բարգավաճություն, բարօրություն մեկ ազգի կամ ընդհանուր մարդկության»[5]։

Սոցիալական այս նույն փիլիսոփայությունն էր հետամտում նաև «Արաքսը»՝ հողի զորության հետ կապելով հասարակական զարգացման տնտեսական ու քաղաքական շրջադարձային անցումները։ «Բայց թե որքան մեծ է հողի ուժը,— գրում էր հանդեսը,— ոչ միայն նեղ տնտեսական կյանքի մեջ, այլև ամենամեծ քաղաքական հարցերում, այդ դժվար է մինչև անգամ կարճ կերպով նկարագրել։ Հիշենք միայն, որ հողի տիրապետության հարցը, կամ հողային հարաբերությանց անբավականացուցիչ ձևը և ուրիշ երևույթների հիմքն եղել են պատմական ամենամեծ գործողությունների, անթիվ պատերազմների, հեղափոխությունների և շատ ազգերի ոչնչանալու պատճառը»[6]։

«Հողի իշխանության» ժողովրդասիրական այս դիտողությունները տնտեսական զարգացման բնագավառում առաջադրում էին «գյուղափրկիչ» բազմաթիվ նախագծումներ։ Նշվում էին գյուղի տնտեսական վերաձևումների ու բարեկարգման բազմաթիվ ուղիներ, դրանց իրականացման հետ կապելով գյուղացիության սոցիալական առաջընթացի հեռանկարը։ Կարծես կրկնելով նարոդնիկների այն պահանջը, որ երիտասարդությունը «ծառայելով ժողովրդին» պետք է «փակեր իր պարտքերը» և իրականացներ սոցիալական արմատական վերափոխումներ, Վ. Պապաջանյանցը գրում էր, որ «հարկավոր է մեզ տեղական հանգամանքները քննադատության ենթարկել, գավառները ուսումնասիրել, խեղճ թշվառ գյուղացուն սիրել ու պաշտպանել։ ...Ուսումնասիրելով գավառներն ու տեղական հանգամանքները, ջանանք մատնացույց լինել այնտեղի վնասավոր ու օգտաբեր երևույթների վրա, առաջինը աշխատել գուրս մղել նոցա կյանքից, իսկ երկրորդը ներս տանել նոցա կյանքի մեջ»[7]։ «Իսկապես,— կարդում ենք «Արաքսում»,— գիտուն և տնտեսագետ անձնավորության պետք ունինք, որը երկրին շորս կողմը ճամբորդելով, ժո-

4 «Պնակ», 1880, № 1։

5 Նույն տեղում։

6 «Արաքս», 1888, գիրք «Բ», էջ 9։

7 «Պնակ», 1880, № 1։

ղովրդի վիճակն ուսումնասիրեն, թշվառության բուն գաղտնյաց թափանցեն և պաշտոնապես կարող լինեն իրենց ըմբռնած եղանակով հիմնական բարեփոխումներ ի գործ դնել»[8]։ Կապիտալիզմի ներթափանցումներից հեղաբեկվող գյուղի սոցիալական հակասությունները վերացնելու այս միտումը, ինչ խոսք, ուտոպիական էր. երիտասարդությունն արդյո՞ք կարող էր իրականացնել տնտեսական վերափոխությունները, որտեղի՞ց պիտի վերցներ ահռաժեշտ նյութական միջոցները, որտեղի՞ց էր սկսվում և որտե՞ղ վերջանում նրա տնտեսական ու սոցիալական գործունեության շառավիղը և այլն, և այլն։ Սկզբունքային նշանակություն ունեցող հարցեր են սրանք, որոնք լուծումներ չեն ստացել ո՛չ «Պսակի» և ոչ էլ «Արաքսի» էջերում։

Սոցիալական հարցն ըստ «Պսակի» որքան պատմական, նույնքան և համամարդկային է, որը միշտ էլ ծառացել է մարդկության առջև՝ նրա զարգացման բոլոր փուլերում։ Որտեղ կա անարդարություն ու բռնություն, այնտեղ էլ կա սոցիալական հարց։ «Սոցիալական մտքերը,— գրում էր շաբաթաթերթը,— տիեզերքի, ամբողջ մարդկության սեփականությունն է, և ոչ թե առանձնապես մեկ երկրի կամ մեկ ազգի. ինչ տեղ կա կյանք, այնտեղ կան սոցիալական մտքեր, ինչ տեղ կա անիրավացի բռնություն, հացի կարոտություն, չքավորություն, այնտեղ էլ կարեկցություն, մարդասիրություն»[9]։ Խախտվել է մարդու և բնության սկզբնական ներդաշնակությունը, հասարակության համաչափությունն ու միասնությունը, առաջ են եկել ճնշողներ ու ճնշվողներ։ Մարդու համար, իբրև հասարակական անհատի, ստեղծվել է մի խիստ անբնական վիճակ։ «Աստված ստեղծեց երկինք ու երկիր,— գրում է Ս. Պապաջանյանցը,— արեգակն ու աստղերը, ջուրն ու ցամաքը, բույսն ու անասունը և վերջը մարդը, իր պատկերին մարդը, որին հանձնելով բոլորն այս, ասաց «աճեցեք և բազմացարուք»։ Նա տվեց մարդուն և ոչ Աղային»[10]։ Ս. Պապաջանյանցը մտորումներ է անում բնության ու հասարակության վերաբերյալ և փիլիսոփայական հայտնի ուսմունքների փորձով բացատրում այդ օրգանական ամբողջությունների ներքին կապերը։ «Անհատը առանձին, մասնավորապես վերառած,— գրում է նա,— անուժ է, ժամանակավոր է, ինչպես և բնության մյուս իրերի անհատները նա առանձին-առանձին վերառած կորցնում է իր բարոյական նշանակությունը, իսկ հասարակական կապակցության մեջ, առանց ոչնչանալու անհատականությունը, այլ միայն բաց թողնելով մասնավորությունը, կազմում է մի ներդաշնակավոր ամբողջ բոլորի ցանկալի միավորությունը դուրս հանելու համար։

Ինչպես անբան աշխարհում՝ ամբողջության մասերի զարգանալուց ու աճելուց ամբողջի մեծությունն է պայմանավորված, նույնպես բնական աշխարհում՝ անհատների զարգանալուց ու աճելուց՝ մեկ ընկերության կամ մեկ ազգի մեծությունն է կախ։ Մեկ ազգ կամ մեկ ընկերություն հասած է իր կատարելության, երբ նորա մասերը, անհատները հասած են իրենց ամենավերջին զարգացմանը ու աճմանը։ Ինչպես անբան աշխարհում իրերի անհատների պարտ ու պատշաճ զարգացումից ու աճումից գոյանում է իրի ներդաշնակավորություն ու կանոնավորություն, նույնպես բանական աշխարհում մեկ ընկերության կամ մեկ ազգի ներդաշնակավորությունը նորա անհատների կանոնավոր զարգացումից ու աճումից է կախ»[11]։

Ինչպես տեսնում ենք, հասարակությունը, ավելի շուտ ամբողջ մարդկությունը, Ս. Պապաջանյանցին ներկայանում էր որպես օրգանական ամբողջություն։ Նա ընդունում էր վերջինիս առանձին տարրերի՝ անհատների, ազգերի, ընկերությունների ինքնազարգացումը, դրան առնչելով ամբողջ մարդկության զարգացումն ու կատարելությունը։ Սակայն, կարծես ամբողջը հան-

8 «Արաքս», 1890, գիրք «Ա», էջ 31։

9 «Պսակ», 1880, № 3։

10 Նույն տեղում, № 1։

11 Նույն տեղում, 1882, № 2։

գեցնելով մասերի մեխանիկական գումարի, Ս. Պապաջանյանցը, այնուամենայնիվ, գերագնահատում էր ամբողջի դերը, գտնելով, որ այն գերիշխում է մասերի վրա՝ պայմանավորելով վերջիններիս զարգացման ընդհանուր ուղղությունը։ «Մարդկությունը ամփոփում է բոլորը,— գրում է նա,— սա է ամբողջությունը, ուրեմն և կատարելությունը։ Մարդկություն ասացյալը է այն մեծ ուժը, այն կենդանի միավորությունը անհատների, որ առանց նորան, կամ նորանից դուրս, մասնավոր մարդը լինում է մեկ անօգուտ, և անշնչան էակն»[12]։ Սա մյուս կողմից էլ ուղղված էր բուրժուական տեսաբանների այն մտայնության դեմ, ըստ որի անհատը հասարակությունից մեկուսացված և ներփակված էակ է։ Կ. Մարքսը նշում է, որ անհատները, ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգևոր առումով ստեղծում են մեկը մյուսին[13], որ անհատի զարգացումը պայմանավորված է բոլոր մյուս անհատների զարգացմամբ, որոնց հետ նա գտնվում է ուղղակի կամ անուղղակի շփման մեջ[14]։

Որքանով ընդհանրության առանձին տարրերի սոցիալական վիճակով է պայմանավորված ամբողջ մարդկության սոցիալական վիճակը և որքանով ներհակությունները «Պսակին» ներկայանում էին ոչ թե որպես «ընդհանուր օրգանական», այլ «տեղական» բնույթի հակասություններ, ուստի և շարթաթերթը դրանց լուծման համար առաջադրում էր «համադեմոկրատական» բնույթի միջոցառումներ, որոնք իրենց ընդհանրության մեջ տեղադրվում էին ժամանակի հասարակական մտայնության ոլորտներում։ Այդ միջոցառումներն էին. «հացի շտեմարաններ» բացել երաշտի տարիներին գյուղացիության կարիքների բավարարման համար[15], եվրոպական երկրների և Ռուսաստանի տնտեսության փորձով «օրինակելի ֆերմաներ» ստեղծել, որ հնարավորություն կտա ներդնելու կատարելագործված արտադրության միջոցներ և նոր արտադրաձևեր[16], պարբերաբար կազմակերպել ցուցահանդեսներ ու գյուղացիությանը հաղորդակից դարձնել գիտության ու տեխնիկայի նորություններին[17], վերացնել սակավահողությունը՝ մանր գյուղացիական տնտեսությունները զարգացնելու և վարձակալական հարաբերությունները վերացնելու համար[18], «փոխատու-խնայողական» ընկերություններ հիմնել էժանագին վարկ տալու նպատակով[19]։ Այդ ամենից առաջ, իհարկե, անհրաժեշտ էր լուսավորել գյուղացուն, նրան ծանոթացնելով «առավել արդյունաբեր տնտեսության օգուտների և իսկության հետ», «էժան և հանրամատչելի գրված գրքերի» և աշակերտներին գյուղատնտեսության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու միջոցով և այլն[20]։ Թերթը սակայն առանձին նշանակություն էր տալիս գյուղական վարկին։ Հետևելով տնտեսագետ Ֆ. Ֆլիտին, Գ. Երզնկյանը «Գյուղական կրեդիտ» հոդվածում խորհրդածություններ էր անում վարկի բարեմասնությունների մասին։ «Կրեդիտը (փող փոխառնելու միջոցը),— գրում էր նա,— մարդուս կանոնավոր տնտեսական կյանքի ամենաանհրաժեշտ պայմաններին է պատկանում։ Եվ արդարև, յուրաքանչյուր արտադրող, լինի նա վաճառական, գործարանատեր, կալվածատեր կամ գյուղացի, շատ քիչ բացառությամբ, չի կարող բավականանալ սեփական միջոցներով, սեփական դրամագլուխներով»[21]։ Հետաքրքրական է, որ հեղինակը հատկապես կարևոր էր դիտում դրամագլխի արտադրողական կիրառումը, որը ոչ միայն «ծածկում է

12 Նույն տեղում։

13 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 36.

14 Նույն տեղում, էջ 440։

15 «Պսակ», 1880, № 17։

16 Նույն տեղում, № 19։

17 Նույն տեղում, 1881, № 6։

18 Նույն տեղում, 1882, № 17։

19 Նույն տեղում, № 15։

20 Նույն տեղում, 1881, № 6։

21 Նույն տեղում, 1882, № 14։

տոկոսը», այլև շահ է բերում, իսկ սպառողական նպատակով վարկի կիրառումը համարում էր «վնասակար»[22]։ Ինչ խոսք, որ վարկը որոշակիորեն նպաստում է արտադրողական ուժերի զարգացմանը, բայց և մյուս կողմից այն հանգեցնում է կապիտալիստական հարաբերությունների սրմանը։ Վարկի վերաբերյալ Գ. Երղնկյանի դիտողությունները եզրեր էին որոնում «վարկային կոոպերացիայի» տեսության հետ։ Գյուղատնտեսության մեջ վարկային կոոպերացիան հատկապես լայն տարածում ուներ Գերմանիայում, որի նախաձեռնողն էր Ռայֆայզենը։ Ռուսաստանում կարճատև վարկի բարեմասնությունները պրոպագանդում էին նարոդնիկները։ Դա մանրբուրժուական ուտոպիա էր, որը ենթադրում էր կանխել գյուղացիության քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում։ Բանն այն է, որ փայատիրական հիմունքներով կազմակերպված այդ վարկային կոոպերացիայի միջոցները կազմավորվում էին նրա անդամների մուծումների հաշվին։ Գյուղացիական չքավորությունն ըստ էության հնարավորություն չուներ փայատեր դառնալու, ուստի և կոոպերացիայի անդամ ունևոր խավը, որի ձեռքում կենտրոնացված էին նյութական լծակները, այն պետք է օգտագործեր իր շահասիրական նպատակների համար, դարձնելով այն շահագործման «կապիտալիստական կոլեկտիվ հիմնարկություն»[23]։ «Պսակի» մի այլ հեղինակ նույն դիրքերից տնտեսական զարգացման կարևորագույն պայմաններից մեկն էլ համարում էր ընկերական ոգու դաստիարակությունը։ «Ամեն մի լուսավորված ու քաղաքակրթված երկրի ու ազգի մեջ,— գրում է Բ. Տ. Գ.-ն,— երբ անհատական ուժը բավականանում չի մի գործ առաջ տանելու ու գլուխ ածելու համար, միանում են մի քանի անհատներ, կազմում են մի ընկերություն և ապա միասիրտ ու միակամ սկսում են գործել ու աշխատել այդ գործի կատարելության ու առաջադիմության համար», ուստի և «մեր ազգի համար անհրաժեշտ են հողագործական և արհեստական ընկերությունների գոյությունը և որքան շատ լինի, նույնքան և մենք մոտ կլինենք և շուտով կհասնենք մեր նպատակին»[24]։ Ինչպես տեսնում ենք «Պսակը» հասարակական զարգացման իր իդեալը կառուցում էր հողագործական և արհեստակցական կոոպերացիաների վրա։ Կ. Մարքսը բազմիցս շեշտել է, որ կոոպերացիաների միջոցով անհնար է սոցիալական խոշոր վերափոխումներ կատարել, որ կոոպերատիվ աշխատանքը սկզբունքով ինչքան էլ գերակշռող լինի և գործնական տեսակետից օգտակար, այնուամենայնիվ, ի վիճակի չէ կասեցնելու երկրաչափական պրոգրեսիայով աճող մոնոպոլիային և ոչ էլ ազատագրելու մասսաներին կամ նույնիսկ թեթևացնելու աղքատացման ծանրությունը[25]։

«Պսակը» ընդհանրապես հակված էր սոցիալական հարցի լուծումն իրականացնել առանց հասարակական ցնցումների։ «Ժամանակակից քաղաքական անցքերի վերա» հոդվածում, անդրադառնալով ռուսական նիհիլիզմին և այստեղ իսկ հակադրվելով «Գոլոսի» բնութագրությանը, թերթը գրում էր, թե «Հայտնել «Գոլոս» լրագրի կարծիքի նման մի կարծիք, կնշանակի, մեր կարծիքով, ժողովրդի գլխի տակը կակուղ բարձ դնել, քնացնել նորան, չթողնել, որ նա իր պատրաստություններն տեսնի բոլորիս սասանեցնող ու ամենայն ինչ հիմն ի վեր տապալող կուսակցությունների ու ընկերակցությունների առաջն առնելու համար»[26]։ Ակներև է, որ «Պսակը» սոցիալական վերանորոգությունների հիմնական ուղին համարում էր ռեֆորմը։

Տնտեսական զարգացման հեռանկարը կապելով մանր կոոպերատիվ արտադրության հետ, «Պսակը», այնուամենայնիվ, ուշադրություն էր հրավիրում երկրամասի արդյունաբերական առաջընթացի տնտեսական հետևանք-

---

22 Նույն տեղում։

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 562։

24 «Պսակ», 1881, № 5։

25 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, с. 10.

26 «Պսակ», 1880, № 3։

ների վերլուծությանը, զբաղվելով տնտեսական զարգացման օրենքների բացատրությամբ։ Նրա համոզմամբ «ճշմարիտ տնտեսության» սկզբունքների իմացությունը հնարավորություն կտար որոնելու «նահապետական դրությունից» կատարելագործված արտադրաձևերի անցնելու միջոցներ։ «Մեզանում,— գրում էր «Պսակը»,— ո՛չ հողագործը և ոչ արհեստավորը, ո՛չ վաճառականը և ոչ դրամատերը գիտեն թե ինչ է և ինչումն է կայանում իսկապես հարստությունը, չգիտեն ինչ է աշխատանքը և ինչ դեր է խաղում ընդհանրապես նա տնտեսության մեջ, չգիտեն նաև ինչ է աշխատանքի բաժանումն և թե աշխատանքի բաժանմունքով և կատարելագործվում է ինչպես արհեստը, նույնպես և մեծ աջողականություն է ստանում բանվոր մշակը։ Չգիտեն, որ մենք պարտական ենք աշխատանքի բաժանմունքին, որ արհեստները արդի ծաղկյալ դրության մեջ են, չգիտեն, որ եթե չլիներ աշխատանքի բաժանմունքը, անհնարին կլիներ զավոդներում կամ ֆաբրիկաներում ստանալ կարճ միջոցում իրերի այն ահագին քանակությունը, որ այժմս ստացվում է։

Ուրեմն հայը, որ այսպիսի անհաջողության և տնտեսական հետադիմության մեջ է, գլխավորապես նորանից է, որ նա հասկացողություն չունի ճշմարիտ տնտեսության մասին, որ նա ծանոթ չի տնտեսական սկզբունքների հետ, որ նա հետևում չի ժամանակին, փորձին, գիտությանը»[27]։ Թեև թերթը հետագայում չի անդրադառնում նշված հարցերի հանգամանալից քննությանը, այնուամենայնիվ ակներև է, որ առաջադրված հարցերը բխում էին կապիտալիստական արտադրության ուղին թևակոխած երկրամասի տնտեսական զարգացման օբյեկտիվ պահանջների հաշվառումից։

Եթե «Պսակը» տնտեսական հարցերի իր արծարծումներում դիխավորապես անդրադարձել է գյուղատնտեսության հարցերին, ապա «Արաքսին» առավելապես հետաքրքրում էին երկրամասի արդյունաբերական զարգացման պրոբլեմները։ Հայտնի է, որ անցյալ դարի երկրորդ կեսին արտասահմանյան կապիտալն արդեն լայնորեն մուտք էր գործել Անդրիովկաս։ Նշելով, որ տնտեսության ճյուղերում այն արդեն տիրապետող է դարձել, հանդեսը պահանջ էր դնում սեփական ուժերով կազմակերպել բնական հարստությունների արդյունաբերական մշակումը։ «Տնտեսական խորհրդածություններ» հոդվածի հեղինակը (ստորագրված է «Ա.») գրում է. «Մեր հայրենիքը առհասարակ և Կովկասը, մասնավորապես, անկասկած շատ հարուստ և առատ երկիր է իր աշխարհագրական դրությամբ..., բայց մի երկրի, մի ժողովրդի հարստությունն ոչ թե նորա բնական հարստություններն, կամ նորա արհեստի և տնտեսական արդյանց արտահայտությունն է։ Ոչ, երկիրը կարող է հարուստ լինել, իսկ ժողովուրդը դարձյալ աղքատ. երկիրը կարող է լինել առատ գործարաններով և արհեստանոցներով, իսկ բաղդը դարձյալ հեռու նորա ժողովրդից։ Գուցե փոքր ինչ անբնական երևա այսպիսի դատողությունը, բայց մեր խոսքն այն դեպքի վերա է, երբ մի որևէ երկրի բնիկ ժողովուրդը մասնակից չէ այդ երկրի հարստությանցը, երբ արհեստը և արդյունաբերությունը նորա սեփականությունը չեն, այլ օտարինը...»[28]։ Հոդվածի հեղինակը հիշեցնում է XVIII դ. ռուս տնտեսագետ Ս. Պոսոշկովին, որը հակառակ մերկանտիլիստների, երկրի հարստությունը պայմանավորում էր ոչ թե գանձարանում եղած ազնիվ մետաղների քանակությամբ, այլ ժողովրդի հարստության աստիճանով, որին կարելի է հասնել նյութական արտադրության ճյուղերի զարգացման միջոցով[29]։ Հայ տնտեսագետը կարծես լրացնում է Ս. Պոսոշկովին, երկրամասի հարստությունների մշակման գործում վճռական նշանակություն հատկացնելով տեղական նախաձեռնությանը,

---

27 Նույն տեղում, 1881, № 18։

28 «Արաքս», 1888, գիրք «Բ», էջ 10։

29 С. Т. Посошков, Книга о скудности и богатстве, М., 1951, с. 13—14.

տնտեսական շրջանակների մեջ ժողովրդական լայն խավերի ընդգրկմանը։ Հապաղումը ճակատագրական վրիպում կարող է լինել ազգի հետագա զարգացման համար, քանի որ «հեռու չէ այն ժամանակը, երբ այդ հարստությունն էլ կխլեն մեր ձեռքից օտար եվրոպացի գումարատերերը, իսկ մենք այդ գործում կընդունենք ամենածանր և ամենավատ դերը, այսինքն բանվորների դրություն կբռնենք, իսկ շահը և աշխատանքը մեր ձեռքից կխլեն»[30]։

Երկրամասում արտադրողական ուժերի զարգացումը պահանջում էր մեծ կապիտալներ։ Անհատական կապիտալների սահմանափակությունը չէր կարող բավարարել ընդլայնվող վերարտադրության պահանջները։ Այս հակասությունը վերացնելու և օտար կապիտալներին դուրս մղելու համար «Արաքսը» կարևոր տեղ էր հատկացնում «ընկերական ոգու» դաստիարակությանը, որպես տնտեսական կյանքում «բարոյական» և «գործնական» որոշիչ նշանակություն ունեցող գործոնի[31]։ «Ոչ մի երկրում,— գրում է հանդեսի տեսաբանը,— սկսած ամենափոքրից մինչև ամենահարուստ եվրոպական տերությունը, երբեք մեծ գործեր չեն կատարվում միակ մարդկանց հարստությամբ, այլ որքան էլ որ մեծ գումարատերեր լինեն գործ ձեռնարկողները, նոքա միշտ աշխատում են կազմել ընկերություն, որովհետև այդպես ավելի հաստատ գործ կարելի է հիմնել և յուրաքանչյուր ընկերակցի դրամաբաժինն ավելի ապահով կլինի։ Գումարատերեր մարդիկ շատ անգամ փոխանակ մի որևէ գործ միայնակ սկսելու և ամբողջ ձեռնարկության հաջողությունը կամ վնասն իրենց վիզն առնելու, ավելի գործնական են համարում միևնույն գումարը զետեղել մի քանի ձեռնարկությունների մեջ, որոնցից յուրաքանչյուրը ընկերակցական սկզբունքի վրա է հիմնված։ Գործնական օգուտը պարզ է. եթե մի ձեռնարկություն վնաս է տալիս, փոխանակ ամբողջ վնասը իր վերա առնելու, ընկերակիցը կրում է միայն նորա այն մասը, որը համապատասխանում է նորա դրամաբաժնին. իսկ մի ուրիշ ձեռնարկության մեջ, որտեղ դարձյալ բաժին ունե, օգուտ է ստանում»[32]։

Հայ տնտեսագետն ակնհայտորեն չէր նկատում ընկերակցական հիմունքներով կազմակերպված փայատերերի ներքին հակասությունները, փայատիրական ընկերությունը ներկայացնելով որպես ներդաշնակ ասոցացիա։ Մինչդեռ իրականում ակցիոներական ընկերություններն այն հիմքն են, որի վրա խարսխվում են արտադրության հասարակական բնույթն ու կապիտալիստական հակասությունների սրումը։ Արտադրության կազմակերպման ակցիոներական ձևը որոշակի փոփոխություններ է առաջ բերում սեփականատիրական հարաբերություններում։ «Այս,— գրում է Կ. Մարքսը,— կապիտալի, իբրև մասնավոր սեփականության, վերացումն է արտադրության բուն իսկ կապիտալիստական եղանակի սահմաններում»[33]։ Այս իրողությունը չկռահելուց է, որ հանդեսի տեսաբանը հասարակական ներհակությունները կապում էր անհատական խոշոր կապիտալների առկայության հետ։ Ուստի, նրա կարծիքով, եթե տնտեսական զարգացումը չիրականացվի ակցիոներական սկզբունքներով, «իրերի դրությունը համարյա թե միևնույնը կմնար, այն զանազանությամբ միայն, որ օտար կապիտալիստի տեղ կլիներ մեր բնիկը, որի անձնական շահերը միևնույն կերպով կարող էին ճնշել ընդհանուր ժողովրդական շահերը»[34]։ Այս իմաստով նա ընկերակցական սկզբունքների արմատավորումը կարևոր էր համարում նաև գյուղատնտեսության մեջ։ Գերմանիայում և Ռուսաստանում գործող այդպիսի ընկերությունները, նրա կարծիքով, գործում են «ամենքը յուրաքանչյուրի համար, յուրաքանչյուրը ամեն-

30 «Արաքս», 1888, գիրք «Բ», էջ 11—12։

31 Նույն տեղում, էջ 17։

32 Նույն տեղում, էջ 14—15։

33 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս I, Երևան, 1947, էջ 426։

34 «Արաքս», 1888, գիրք «Բ», էջ 15։

քի համար»[35] սկզբունքով։ Ինչպես արդեն նկատել ենք, սա մանրարուրժուական այն ոտոպիան է, որին հարում էր նաև «Պսակը»։

«Արաքսը» երկրամասի տնտեսական զարգացման համար կարևոր էր համարում արտադրության կատարելագործված եղանակների ներդրումը, գտնելով, որ ապագան «գործարանական արդյունարերությանն» է, որ «կուլտուրական առաջադիմության դինը սկսել ենք հասկանալ» և որ դա է զարգացման միակ ուղին։ Դրա հետ մեկտեղ ափսոսանքով է խոսում արտադրության նահապետական ձևերի՝ մասնավորապես արհեստների կործանման մասին[36], մի ինչ-որ տեղ մանր հողատիրոջ աշխատանքը գերադասելով վարձու աշխատանքից[37], մի երրորդ դեպքում հնարավոր համարելով տնայնագործական արտադրության հարատևությունը տնտեսական զարգացման նոր իրագրության պայմաններում՝ շեշտելով, որ եթե «ուրիշ երկրներում, առավել Ռուսաստանում առանձին ուշադրություն են դարձնում տնային արդյունարերության վերա, աշխատելով նորան բարձրացնել և զարգացնել, մենք առանց հարգանքի ենք վերաբերվում դեպի նա»[38] և այլն։

Ընդհանուր առմամբ սրանք են «Արաքսի» և «Պսակի» տնտեսական հարցադրումները, որոնք իրենց հակասություններով, չավարտվածությամբ ու նմանողականությամբ հանդերձ, XIX դ. հայ տնտեսագիտական մտքի ուշագրավ դրսևորումներից են։

ЭКОНОМИЧЕСКИЕ ВОПРОСЫ В ПЕРИОДИЧЕСКИХ ИЗДАНИЯХ «ПСАК» и «АРАКС»

РОБЕРТ САРИНЯН

Резюме

Основные направления армянской экономической мысли XIX в. соответствовали социально-экономической сущности общественных течений того времени. Вопросы экономического развития освещались в таких органах периодической печати, как «Мшак», «Мегу Айастани», «Нор Дар», «Мурч», «Ардзаганк», представлявших различные общественные направления. Периодические издания «Псак» и «Аракс» не отличались глубоким всесторонним анализом социально-экономической жизни, однако вопросы, затрагиваемые ими, представляют определенный интерес и дополняют историю армянской экономической мысли. В этих органах печати отражены взгляды либерально-буржуазных, национально-консервативных и национально-демократических течений по вопросам развития Закавказья, устранения социально-экономических противоречий общества и др.

---

35 Նույն տեղում, էջ 16։

36 Նույն տեղում, 1894—1895, գիրք «Բ», էջ 29։

37 Նույն տեղում, 1888, գիրք «Բ», էջ 12—13։

38 Նույն տեղում, 1889, գիրք «Բ», էջ 12։